

ՔԻՒՐԳ ՏԵՐԷ-ՊԷՅԱՊԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՃԳՆԻ
ՏԵՂԱՒՈՐՈՒԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ .

(Քիւրդ Սէյս Ահմէս փաշա. Քիւրդական բանակները Էրզրումի, Վանի, Պայագիսի եւ Պիքլիսի վրայ . Ռուսէկան կառավարութիւնը հաստատուած ի Մուշ . Սուլթան-Խանումը եւ Հայ Մըխօն . ասոնց դաւադրական պատերազմիկ ծրագիրները . Հայ եւ Քիւրդ ժողովրդական սպանութիւններ . կողոպուցներու եւ առեւանգումներու շարունակութիւնը . Օսմ . Տիրապետութեան զօրանալը) :

Որովհետեւ չը կայ որոշ պատմական զիծ Քիւրդ քաղաքական կեանքի համար , ե քանի որ ստիպուած ենք հաւաքարար գտնել ու ղետեղել , ապագային թողնելով անոր զարգացական ամբողջացումն . յետագայ կտորը որ ղիւցաղնական նկարագրութեան մաս մը կը կազմէ հրատարակուած քիւրդերէն ե ֆրանսերէն լեզուներով Բրօֆէսէօր Lerchէն . քաղաքական իշխանութեան մը ընդարձակ ծաւալի մը պատկերն է Հայաստանի մէջ՝ Պէտիր—Խան պէյէն շատ առաջ : Նկարագրուած պատերազմը յաջող ելք կը ստանայ Հայոց մը մասնակցութեամբ . պատմուածքը կու տանք ամբողջութեամբ , որովհետեւ քիւրդական աղբիւրէ է :

եղած Հայերը արտօնութիւն չտան , Քիւրդ բէգը իրաւունք չունի իր ընտրած կենը բերելու . Քիւրդ Խաթունը ունի իշխանուհու առանձին ե իր դիրքին պահուած իրաւունքները ժողովրդի հետ . ինչ որ հին Հայ կեանքի մէջ Տիկիճութեան կը պատկանէր . տեսակ մը ժողովրդական ընտրական ձև մ'է այս , նախնական այդ պետական կազմին համար :